

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՌՅԿԵ ՌՅԿՁ

Հ Ա Տ Օ Ր

Ձ Գ



Ս Ղ Ա Ձ Ա Ր

1926

ՅՈՒԼԻՍ

ԹԻՒ 7

ԲԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ Ա Տ Ր Ի Ս Ա Ր Ք Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏՐԱՊՈՒՏՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց Մ Է Ձ

(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1926, էջ 161)

22. Լուսաւորչի վերջին պայազատը կը վախճանի, և անոր տեղ ս. Մեսրոպ վարդապետ, որ երիցութեան ձեռնադրութիւն միայն առած կը պատմուի ս. Սահակէն¹, կը ստանձնէ «զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ»²: Վեց ամսէն ինքն ալ կը մեռնի, և կը յաջորդէ՝ իւր հրամանաւ՝ Յովսէփ Երէց իբրև տեղապահ³, որ նախորդին պէս առանց եպիսկոպոսական աստիճանի կը մնայ, տասներկու տարի մինչև մահը վարելով նոյն պաշտօնը և ժողովներ ալ խմբելով: Անոր վրայ տեղապահութիւնը շուտով կաթողիկոսութեան կը

փոխուի, որով Եղիշէ զայն կրնայ կոչել «Եպիսկոպոս Այրարատոյ»⁴, որ հայրապետական տիպոս էր, և Ղազար ըսել՝ թէ յետ Մեսրոբայ յաջորդեաց զաթոս հայրապետութեան աշխարհիս Հայոց», և զայն կոչել «զարդարև կաթողիկոսն Հայոց», վկայելով հանդերձ՝ թէ «Երէց էր ըստ ձեռնադրութեան»⁵: Եւ Երէց ալ Ձագ մինչև մահը, ինչպէս Փարպեցին սրբոյն նահատակութենէն քանի մ'օր յառաջ տակաւին կը հաստատէր Ղևոնդի բերանով՝ թէ Յովսէփ թէպէտ պատուով զուիս է ամենայն Հայոց ըսահանայու-

1. Նշանակիլ կարգաց բանից Եղեմայ, ապ. ընդ Սուսուելի, 267. — 2. Կորին, 267. — 3. Եղիշէ, 28. Խա

րան. Գ, 46. — 4. Եղեշէ, 49. — 5. Փարպ. 106, 262, 264.

Թեանց ք, բայց իւր վկայակիցը Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց՝ «զկարգ օձման ըստ ճշմարիտ ձեռնադրութեան զհաստ-րիայն ունի», ինչ որ կը պահէր Յով-սեփայ¹, և որուն կը ձայնակցի Եղիշէն ալ, որ նահատակները յիշելով ըստ նոյն կարգի ձեռնադրութեան, նախ զՍահակ եպիսկոպոս կը դնէ, ապա զՅովսէփ և միւս երիցոյնը, և հուսկ Քաջաջ սարկա-ւագր²: Որով Չամչեան³, և անոր հետեւ-ով նաև Օրմանեան⁴, սխալեցան՝ զՅով-սէփ եպիսկոպոսական կարգով ալ պա-կուած տեսնելով, հրապուրուած վարդա-նանց պատմին գործածած եպիսկոպոս տիտղոսին, որ անոր պաշտօնին անունն էր, ոչ ձեռնադրութեան: Նոյն սխալը գործեց և Տուռնրից, ընտրութենէն վեց տարի վերջ եպիսկոպոս ձեռնադրուած համարելով զայն⁵:

Ինչո՞ւ ուրեմն այնքան տարի առանց ձեռնադրութեան մեաց Յովսէփ: Ըսել հապճեպով՝ թէ «ոչ կ'եսարիոյ խնդիր կար այլ ևս, ոչ պարսիկ արքունեաց արգելք, ոչ հակակիր եկեղեցականութիւն, և ոչ ընդդիմադիր կառավարութիւն⁶», ձեռնադրութիւնը հաւանական չի դարձը-ներ. որովհետև այդ տեսնել չուզուած արգելքներէն կային իսկպէս: Կեսարիոյ փոխան՝ քան զայն մեծ ու հզօր կոստանդ-նուպոլիսը կար, ուր պատշաճ էր անուղ-ձեռնադրութիւնը, անոր բարեկամութիւնը և սահակեան համաձայնութեամբ յունա-կան Հայաստանի նորաստաց առաջնոր-դութիւնը պահելու համար: Միւս կողմանէ Տիգրանի արքունիքը ժամանակէ մ'ի վեր իրեն վերապահած էր մեր կաթողիկոսաց ընտրութեան և զանոնց պաշտօնագտրի ընկելու իրաւունքը: Շապուհ «էր ցասմամբ ընդ խորովայն», որ Արկաղէտ կայսեր հետ բարեկամացեր և «անհրաման» հայ-րապետ էր կարգեր զՍահակ⁷, և այս վեր-ջինս երկու անգամ աթորնկէց ըրաւ,

նախ խորովու, և ապա անոր պաշտպա-նած Արտաշեսի հետ, որով կը թաղէր Արշակունեաց թագաւորութիւնը. և օրի-նաւոր կաթողիկոսին տեղ յաջորդաբար նստեցնելով զՍուրմակ, Բրքիշոյ և Շը-մուէլ⁸: Այսպէս ուրեմն Հայոց հայրա-պետութիւնն երկու սուրի մէջ կը զբո-նուէր, մէկ կողմէն քաղաքական բռնու-թիւնը, և միւս կողմէն եկեղեցական ի-րաւունքը, և կացութիւնը չափազանց փափուկ էր. որով Մեսրոբ ու Յովսէփ խոհեմութիւն համարեցան զբաւել աթորը «տեղապահութեան» դիմակին ներքև, և ձեռնադրութեան ինչու սուրի չ'յարուցանել, իրենց վրայ չ'հրաւիրելու համար Պարսից կամ Յունաց ֆեսախներ զժողովութիւնը: Արդէն Սուրմակ ալ, որ տարի մը կաթո-ղիկոսութիւն ըրաւ, նոյնպէս «երէց» էր ու մեաց⁹. Իսկ միւս երկուքն ասորի էին, և յայտնի չէ իրենց աստիճանը:

Այս էր ուրեմն իրական վիճակը հայ-րապետական նախոյն, որ ս. Յովսէփայ օրով ևս սակաւին Յունաց զէթ բարոյա-կան ազդեցութեան ներքև կը գտնուէր:

23. Վարդանանց պատերազմը պարզեց բոլորովին քաղաքական հորիզոնը. զՀա-յաստան սպստամբ ու յանցաւոր ըրաւ Պարսից առջև, և անոր վզին բերաւ նստե-ցուց պարսիկ բռնակալ մարզպաններ: Հայերը նախ խորովու ժամանակ¹⁰, և յետոյ երկրորդ փորձով մը նաև մեծ պա-տերազմին առթիւ¹¹ զզացին՝ որ Բիւզան-դոնէն որ և է զինուորական օգնութիւն կարելի չէր ակնկալել: Նա չէր ուզեր իւր բարեկամութիւնը Պարսից հետ ա-րինաւից թշնամութեան փոխել՝ Հայոց պատանաւոր, ինչպէս յայտնի կը վկայեն մեր աստմիշներն ինքնին. և հայ ազգը համակերպեցաւ իւր վիճակին: Հայրապե-տութիւնն ալ հարկադրեցաւ ճշդիլ իւր դիրքը. ինքն իրեն ապրելու էր այնուհե-տև, և անկախ Յոյներէն, ինչպէս արդէն

1. Փարս. 295. — 2. Եղիշէ՝ 341-42. — 3. Չամչ. Բ, 466-68. — 4. Օրման. Ազգ. 384-85. — 5. Tourn. 507. — 6. Օրման. 386. — 7. Խորեն.

Գ, 6. — 8. Նոյն՝ Գ, 6, 444-46. Փարս. 70-74. — 9. Փարս. 70. — 10. Խորեն. Գ, 6. — 11. Եղիշէ՝ 484-86. Փարս. 217-18.

տիրապետող քաղաքական բռնութիւնն ևս կը պահանջէր: Յոյներն իսկ կ'ըմբռնէին ու կը գնահատէին այս հարկը, որով և լոեցին: Ս. Յովսէփայ « յաջորդեցին » Մելիտէ, Մովսէս և Գիւսի: Առաջինը կանխաւ « եպիսկոպոս » էր Մանազկերտոյ³, և անկարող ձեռնադրութեան: Մովսիսի աճուրդ միայն գիտենք, և ուրիշ ոչինչ: Գալով Գիւտի, Պերոզ արքայ զինքն ի Տիգրոն կոչելով, կը յանդիմանէր՝ թէ « մինչև ցայժմ քո իշխանութիւնդ առանց իմ հրամանի կաշխալ է, և ծառայ մարդիկ (այս ինքն իւր հայ հպատակներն) են՝ որոց ճեզ զայդպիսի մեծ գործ լրուեալ է, և ոչ ինչ յինչն ունիս վատահութիւն »: Միանգամայն կը պահանջէր երկրպագիւ արգական. ապա թէ ոչ, կ'ըսէր, « զեպիսկոպոսութիւնդ ի բաց առնում ի քէն, և ի գործոյդ ի բաց հանեմ »: Պատասխանեց հայրապետը՝ թէ պաշտօնէս կրնաս հանել զիս, բայց « եպիսկոպոսական ձեռնադրութիւն » անլնջելի է, և ոչ ոք կարող է առնուլ ինձմէ⁴: Պաշտօնանկ եղաւ, և Հայաստան դառնալէ յառաջ Պարսկաստանի մէջ և պիսկոպոսներ ձեռնադրեց նոյն կողմերուն համար⁵: Այսպէս ուրեմն Գիւտ ազգէն ընտրուած ու ձեռնադրուած էր՝ առանց արտաքին միջամտութեանց, ու կը վարէր կաթողիկոսական ամբողջ պաշտօնը. և այս դրութիւնը վերջնական վաւերացումն եղաւ՝ Արշակայ նախ փորձած ու ձախողած, և յետոյ Պապէն կրկնուած հայրապետական ըղձաքեալ անկախութեան, որ պէսպէս խաւերէ անցնելով, ու զփութութեանց բախելով, սովորական դարձած է հիմայ Գիւտի և իւր յաջորդաց համար: Այսու հանդերձ սակայն Գիւտ կը պահէ կրօնական միութիւնն ու մտերմութիւնը Յունաց հետ, որոյ համար ևս մեզադրուեցաւ Պերոզէ⁶. և որ ուրիշ փաստ մ'է յունական ներդրամութեան՝ նոր կացութեան հանդէպ:

Եզրակացնելով, Հայոց հայրապետութիւնը՝ Լուսաւորչէն սկսեալ մինչև յետ Ներսիսի մահուան, և ապա մինչև վարդանանց պատերազմը՝ աւելի կամ պակաս չափով ենթարկուեր է նախ կեսարիոյ արքեպիսկոպոսին և յետոյ կոստանդնուպոլսի պատրիարքին գերիշխանութեան: Հետեաբար կատարեալ առասպել մ'էր ս. Ներսիսի վերագրուած ինքնազուտի պատրարքութեան աւանդութիւնը:

24. Նոյնքան անհիմն է նաև Արքահամ կաթողիկոսի պատրիարքութեան համբաւը: Վասն զի նախ՝ թորոց գիրքը, որ կը բովանդակէ Արքահամու հայրապետութեան շրջանի և պայքարներուն ընդարձակ վաւերագրերը⁷, ոչ մի ակնարկու թիւն ունի այսպիսի պատրիարքութեան և միւս շողողուն աստիճանաց, որոնք եթէ ստոյգ էին, անոնց ամենէն նախանձաւորը՝ զանոնք հաստատողները պիտի լինէին և յիշէին անվրէպ, Նոյնպէս Սիբէոս՝ որ է դարուն կը գրէր ու կը յիշատակէ Արքահամու ընտրութիւնը, կ'անգիտանայ անոր նորաստեղծ պատիւր⁸:

Երկրորդ՝ Մարենոցաց հայր Սողոմոն « գրով » թողր էր և Աղունից պատմիչը կարդացեր՝ թէ Արքահամու կաթողիկոսութենէն տարիներ յետոյ անոր պատրիարքութեան համբաւը զեռ գոյութիւն չունէր, և Հայերը կ'ընդունէին Յունաց առաւելութիւնը՝ թէ զուրկ էին պատրիարքական և այլ պատիւներէ, ու զլիսիկոր կը լռէին⁹:

Երրորդ՝ աւանդութիւնն ինքնին կը հերքէ ինք զինքը, այդ պատիւը հակասաբար ընծայելով մերթ Ներսիսի և մերթ Արքահամու, և հաստատելով՝ թէ չէր բղիներ որ և է գրաւոր աղբիւրէ, որ եթէ լինէր, աւանդութիւնը մէկ ձև միայն պիտի ունենար: Այլ թ դարու մօտերը ստեղծուած տարտած համբաւ մ'էր լոկ, զոր ոմն այս կողմ կը քաշէր և ոմն այն կողմ:

25. Ոչ միայն պատրիարքութեան պատիւը, այլ կոչումն իսկ գոյութիւն չունի

1. Փարպ. 338. — 2. Եղե՛է, 49. Փարպ. 124. — 3. Փարպ. 346-48. — 4. Նոյն՝ 350-52. — 5.

Նոյն՝ 344-45. — 6. Էլ 151-195. — 7. Սէր. Գ. 45. — 8. Թագ. 104.

հին հայ մատենագրութեան մէջ մինչև Ժ դար, Մեր զասական զրիչները, որոց օրով տիտղոսներու ճշդուժը չկար տակաւին, կարողիկոսե՛ն ու ըստի մը հումանշերէզ գատ՝ Հայոց հայրապետին տունին նակ արքեպիսկոպոս¹ կամ եպիսկոպոսպետ² կամ արքեպիսկոպոսպետ³ կոչու՞ննիրը, մնարապոլտաց սեպականն, որոցմով աւնուանեցին կեսարիոյ վիճակաւորն ևս⁴, իսկ Ե դարու մէջ այդ տիտղոսներն ալ ընկան, ու Յնաց կարողիկոսը⁵ (καθολικός = ընդհանրակե՛ն), և ասոր հետ նակ աւելի պարզը՝ կոպիկոպոսը⁶ (επίσκοπος = վերապրտոյ), կամ եպիսկոպոս Այրարատոյ⁷: Արբա՛համ ինքնին կ'անգիտանայ իւր շորթած պատրիարք անունը, և ինք զինքը կը կոչէ լոկ «Հայոց կարողիկոս»⁸։ անդ մը նակ «յլբրահամայ՝ թէպէտ և ոչ կամաւ՝ Հայոց կարողիկոս»⁹։ Այսպէս կաթողիկոսութիւնն իսկ ակամայ ընդունեց էր, թող թէ պատրիարքութիւնը, զոր անոր թղթակիցը ալ կ'անգիտանան, և իրեն սոսկ կարողիկոս կը զբն¹⁰։

Պատրիարքութեան աւանդութեան հետ մէջտեղ ելաւ կոչու՞նն ալ. և նախ Յովհաննէս պատմագիրը կարից գայն ս. Երմիսի, Շահակայ ու Ենրսէս Շինողի վզն¹¹, մոռնալով սակայն այլոց վրայ: Եոյնը հանելի թուեցաւ իւր յաջորդներէն Անանիա մեկեցուոյն, որ ինք զինքն անուանեց «նուաստ պատրիարք», և Օրմանեան առատածնունդեմար մը մինչև ի Լուսաւորիչ հանեց գայն, «պատրիարքն Հայոց սուրբն Գրիգորիոս»¹²։ Վարդան նոյնը սուա շատերուն¹³. կիրակոս¹⁴ և Սիւնեաց պատմիչը¹⁵ զանց չըբին գայն:

26. Ընդ հակառակն հայ կղերին ողջամիտ մասը չչլլացաւ այդ վիպէն. և իրենք զիրենք պարզապէս կարողիկոս դաւ

անեցին՝ Ե. Շնորհալին¹⁶, Կոստանդին Ա¹⁷ և ուրիշներ: Եղան նակ անձինք՝ որ ճշդեցին տիեզերական Եկեղեցւոյ պատրիարքաց թիւը, չորս աթոռներ միայն դնելով, ինչպէս կաղանկայտուացւոյ շարունակողը¹⁸, Յովհ. կաթողիկոս¹⁹, Ե. Լամբրոնացին²⁰, Միթթար Գոշ²¹, վարդան²² և Օրբելեանը²³, իրարմէ աննլով ու կրկնելով. և էին՝ Աղեքսանդրիոյ, Անտիոքայ, Հռովմայ և Եփեսոսի աթոռները, վերջինս յետոյ փոխադրուած ի Կոստանդնուպոլիս, և Անտիոքին յերուսաղէմ: Այս էր ժամանակի համոզումը, որոյ մէջ սակայն պատմական սխալներ կան. ինչպէս անձիշդ էր միջնադարեան կարծիքն ալ, որ չորս աւետարանաց գրութեանց զրու՞թեանց զաղացաց հետ կը կապէր պատրիարքութիւնը: Յովհաննէս ու վարդան անցեալ ժամանակաւ կը խօսին, «չորք միայն էին», որպէս զի կարենային Հայոցն ալ անոնց վրայ բարդել: Ընդ հակառակն ներկայ ժամով կը խօսի Լամբրոնացին, «ևստիև նոքա ընդ տիեզերս՝ ի չորս մայրաքաղաքաց չորս աթոռն»։ նոյնպէս Գոշը՝ թէ «ունին զաթոռ չորից աւետարանչացն»։ և Օրբելեանը, հակասաբար, թէ «կոյիս պատրիարք, որք բազմալ կան ի վերայ չորից աթոռոց աւետարանչաց»։

27. Գրիչներէզ ոմանք որոշեցին ևս Հայոց կաթողիկոսին դիրքը նուիրապետական դասակարգութեան մէջ: Եսխ Աղուանից պատմութիւնը Հայոց զէմ Յունաց բերանը դրաւ այս սահմանը. «Պատրիարզ՝ որ է հայրապետ, և արքեպիսկոպոս՝ որ կոչի կոպիկոպոսպետ և կաթողիկոս»²⁴. ուստի կաթողիկոսը հաւասար է արքեպիսկոպոսին, և պատրիարքէն աւելի խոնարհ: Եոյնը կրկնեց Տարսուսի ստաշնորքը. «Երկրորդ դաս մատրնանի

1. Ագթ 645, 650. — 2. Փառ. 9, 16, 19, 26, 28. — 3. Երմ. 118, 198. — 4. Երմ. 72. Ագթ. 600. — 5. կորեւ՝ 8, 16. Փարս. 36, 37, 89 ևն. — 6. կորեւ՝ 11, 14, 18. Եղիշ՝ 50, 77, 131, 822. Խորեւ. Գ, էէ. — 7. Ատմ՝ 49. — 8. Գր. բարց՝ 150, 164, 176. — 9. Անդ՝ 163. — 10. Անդ՝ 163, 161, 166, 178, 185. — 11. Ե. ԿԲԳ. 64, 68,

111. — 12. Արտ. 1897, 129, 196. — 13. Վրդ. 47, 48, 51, 60, 70, 76, 88, 91, ևն. — 14. կիրակ. 59. — 15. Օրբել. 18, 850 ևն. — 16. Շնորհ. Երմ. 29, 32, 211, 298 ևն. — 17. կիրակ. 168, 167. — 18. կաղանկ. 216. — 19. Ե. ԿԲԳ. 62. — 20. Լամբ. Պարս. 82. — 21. Գոշ՝ Գոս. Միսի. — 22. Վրդ. 46-47. — 23. Օրբել. 78. — 24. կաղանկ. 216

եկեղեցւոյ են արքեպիսկոպոսը... ի սոյն աստիճանի են և կաթողիկոսը »: Աղոնց հակառակ՝ Գորշի սզգասիրութիւնը պատ- ըրիարքի, արքեպիսկոպոսի և մետրապոլիտի յունական աստիճաններէն և չորս խո- նարհագոյններէն զատեց կաթողիկոսակա- նը, և քան զպատրիարքականն ալ բար- ձրացուց, գրեւով. « Որտեղ որչա՛ս գլխա- տըք եպիսկոպոսաց՝ կորոզիկաւք, որք ունին զպատուականագոյն աթոռ »: և յե- տոյ, « Ինճերորդ զսա՛ վերագոյն քան զամենեւեան՝ պապիաւս (Հռովմայ) նմա- նեալ քերովբէից », իւր սկզբնագիր օրի- նակին համեմատ՝ որ կը պահուի ի Ս. Ղազար: Սակայն ինքն ալ կը հաստատէ դասածկարգութեանց պակասը Հայոց մէջ, « որպէս Աղուանիցն ուսուցանէ պատմու- թիւն և այլք: Վասն որոյ հարկաւոր է, կ'ըսէ, այս կարգ յեկեղեցի ի հայրապե- տաց կարգիլ: և անփոյթ արարեալ միշտ՝ պարտաւոր ցուցանին (Հայք) յատեան դատաստանի »:

28. Խնդրոյն վրայ իրաւական տեսա- կիտով ալ թէ նայինք, կրնային Հայերն օր մը յանկարծակի պատրիարքութեան բարձրացնել իրենց աթոռը, ինչպէս միա- մտօրէն կարծեցին միջին դարուն: Ո՛չ,

պակասելով իրենց աղոր համար պահան- ջուած պայմանները: Պատուոյ փոփոխու- թիւնը կամ բարձրացումը՝ տիեզերական ժողովոց յատուկ էր ս. Նիրսեսի օրով, երբ Հայք դեռ ի մուսթեան էին ընդհ. Եկեղեցւոյ հետ, ինչպէս տեսանք Նիխիոյ և կոստանդնուպոլիսի ժողովոց ընթացքին մէջ¹. և նոյն իրաւունքն ի գործ դրին Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովներն ալ²: Ապա թէ ոչ՝ ամէն մետրապոլիտ խելքը փշած պահուն պիտի կարենար ինք զինքը պատրիարք հռչակել, և այն ժամանակ ոչ նուիրապետութիւն և ոչ մուսթիւն կը մնար Եկեղեցւոյ մէջ: Որով և Հայք, որ մասնակցեցան կամ ընդունեցան տիեզե- րական ժողովոց հեղինակութիւնն ու սահ- մանները, չէին կրնալ ինքնաստեղծ պա- տիւններու վրայ խորհիլ. ոչ ալ Առջա- կունի մը քմահաճօրէն բաժնել փորձելով Հայոց աթոռը կեսարականէն, կարող էր զայն պատրիարքութեան վերածել: Իսկ ընդհ. Եկեղեցիէն զատուելէն յետոյ՝ ան- կարելի էր Հայոց այդպիսի պատիւ մը բնականապէս իւր հին նշանակութեամբ ձեռք բերել օրինաւորապէս, անհաղորդ լի- նելով զայն շնորհող իշխանութեան հետ: (Շարայարելի) . Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ ԶՎԱՐՈՒՅ ԵՐԵՄԵԱՅ ԶԷԼԷՊԻՈՅ

ՅԵՐԱՆՅԵԼԻՈՍԵՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՅԵՂՐՈՒՆԻ ԻՐԻՄԷ

Մխիթարեան Ձեռագրատան մէջ կայ (Թիւ 621 դարան Բ.բ) գիրք մը՝ Երե- միայ Զէլէպիի Վիճաբանութիւն Յունաց, զոր նոյն իսկ Երեմիա իւր ձեռքով գրած է և նուիրած է Տիրացու Կիրակոսին:

Ձեռագրիս սկիզբը մեր նախկին Հայ- րերէն մին, որուն անունը մեզ անծանօթ է՝ հետեւեալ ծանօթութիւնները նշանա- կած է.

« Գրէ Երեմիա չէլէպին ի միումն ի գրոց իւրոց այսպէս. Ռ՛ձԷ (1656). ա»

պրիլի ԻԲ, երեքշաբաթի գիշերին, լուսինն ի կարիճն, ծնանի կոմիտասն, և է կո- միտասս այս կրտսեր եղբայր սոյն Երե- միայ չէլէպոյս, որպէս զրէ գինքննէ նոյն կոմիտաս, որ յետոյ եղև երէց, յոտա- նաւոր յիշատակարանի միւում գրոցն եղ- րօր իւրոյ Երեմիայի, զոր իւրովք ձեռօքն գրեալ է, այսպէս գծէ »:

1. Բապ. 106. — 2. Պամ. Ժոյ. 196-99, 216.